ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ԿՏԱԿՆ

Արդէն ի վաղուց համբաւածանօթ և ազգասէր հանգուցեալ Պարոն Մկրտիչ Էմինի կտակի մասին երկարօրէն և մանրամասն հրատարակուած է Աբէյեան օրագրի (66 թիւ, Յունիս 11/23 1893 մէջ. ուստի մեք ևս երախտապարտ՝ անմահանուն բարերարին, պատշաճ կը համարինք զետեղել զնոյն Բաքուինի մէջ, Լազարեան—Մեմնարանի Պրոֆեսոր Պր. Գրիգոր Խալաթեանցի առ մեզ ղրկած համառօտեալ տեղով, անփոփոխ պահելով ծ յօդուածն, որ ինչպէս յայտնի է, ազգասէր և ուսումնատենչ Բարերարն որոշած է Մխիթարեան Միաբանութեանն՝ յօգուտ և ի շահ մեր սիրելի ազգին զարգացման ի գիտութիւնս և ի դպրութիւնս ազգային մատենագրութեան: Արդարև ունեցեր է Հայն այսպիսի ազգօգուտ և ընտիր անձինք, որոց տեսչանօք մասնակից կը համդիսանայ հազուագիտուն Պարոն Մկրտիչ Էմին թողլով իւր չափով զուսմարը ուսումնական նպատակաւ ի խրախոյս և ի քաջալերութիւն հայ բարերարաց:

Ա. Յօդուածում Էմինը նշանակում է 2400 ռուբլի իւր թաղման և արձանաքարի:

Բ. Յօդ. 10,000 ռուբլի Լազարեան Շեմարանին՝ պայմանաւ, որ զուսմարը մնայ անձեռնմխելի, իսկ տոկոսիքով հրատարակուին ժողովածուներ Հայ Ազգագրութեան:

Գ. Յօդ. 3,000 ռուբլի իւր աղախին Սոֆիա Մեաչինին՝ սորա ապրելի քան 30 ամեայ ծառայութեան համար:

Դ. Յօդ. 500 ռուբլի հանգուցեալ Պետական խորհրդական Աթանաս Կանիվիցկու կնոջ՝ Նատալիա Կանիվիցկու:

Ե. Յօդ. 200 ռուբլի իւր հանգուցեալ մտերիմ ընկեր Գէորգ Ախվերդեանի գերեզմանը ծաղիկներով զարդարելու համար, ուղարկել Թիֆլիզ Յովհաննէս Ախվերդեանին:

Զ. Յօդ. Իւր Մատենադարանի տպագիր գրեանքը (մօտ 3000 Հայ և Եւրոպական մատեաններ) Լազարեան Շեմարանին, ուր նա 4 տարի ձրի ուսել էր:

Է. Յօդ. Իւր հին հայ գրչագրերը, ձեռագիր երկասիրութիւնները, և ամէն տեսակ գրութիւնները թողնում է իւր աշակերտ և իրեն փոխանորդ Գր. Խալաթեանցին:

Ը. Յօդ. Ս. Ս. Յուլիանեայ և Պետրոսի պատկերը իւր աներձագ Շուլգինին:

Թ. Յօդ. Զորս Հիթաներկ պատկեր՝ իւր կնոջ նկարած, բաժանում է՝ 1. իւր աներձագին, 2. Իլիա Մերեբրիակով—Օքրոմիշեւսկին, 3. Նիկոլայոս Միկուլինին, և 4. Գրիգ. Խալաթեանցին:

digitised by A.R.A.R.@

Ժ. Ցոչ. (ամբողջոլին և բառացի) « իմ արծաթեղէնս՝ մնա 15 ֆունտ, » ոսկի ժամացոյցս՝ նոյնպիսի շղթայով և երեք ոսկի մանր զարդերով, շապկի » կոճակներ ոսկի՝ 2 մեծ և 3 փոքր, և ոսկի մատիտ, սև ազուէսի թա- » թերից կարած՝ կամշատկայի ջրաղուէսի (la loutre) օձիքով՝ կապոյտ » դրապով ծածկած վերարկուս խնդրեմ իմ Լազարիչ Սերեբրիակով–Օք- » բոմէղէլոլին և Նիկոլայ Դմիտրիչ Միկուլինին ծախել։ Այդ վաճառու- » մից զոյացած գումարը, որպէս և բոլոր կտակային տնօրինութիւնները կա- » տարելուց յետոյ մնացած փողերը յանձնում եմ գիտնական Հայ Միա- » բանութեան Մխիթարեանց՝ որ ի Ս. Ղազար ի Վենետիկ։ Այս գումարը » պէտք է պահուի անձեռնմխելի, զորս տոկոսքով պէտք է հրատարակուին » հին, նոր գրիչ հայ պատմական գրուածքներ, նոյնպէս և երկեր Հայ- » ժողովրդական գրականութեան՝ բառիս ընդարձակ առումը, այն է՝ ան- » փաւէր գրուածքներ (apocryphes), աւանդութիւններ (légendes), զրոյց- » ներ, ժողովրդական երգեր և այլն։ Այս հրատարակութիւնների ճակա- » տին գրոշմելու է. — « Ցիշատակ Մկրտչի Էմին » —։ Ցիշեալ մայր- » գումարի չծախսած տոկոսիքը առանձին պահելու է և ի գործ դնելու է » նոյն նպատակի համար՝ ըստ պահանջման հարկին։ Այս ժողովրդական- » գրական յիշատակարանների տակաւ առ տակաւ հրատարակութիւնը յան- » ձնում եմ Վենետիկեան Մխիթարեանների Միաբանութեան գիտնական » անդամներին։ Ապագայ հրատարակութեան տպագրութիւնը պէտք է սկը- » սուի իմ մահից երկու տարի յետոյ՝ այն նիւթերով, որոնք արդէն լոյս » են տեսել « Բազմավէպ» հանդիսում՝ սկսեալ առաջին թուերից, և » « Սոփերքի » մէջ։ Ցանկալի է, որ այս ապագայ շարքը լոյս ընծայուէր » Charpantierի հրատարակութիւնների ձևով՝ սպիտակ լաւ թղթի վերայ »։

Ի վերջոյ չենք մոռանար մեր խորին շնորհակալիքն յայտնել հրապարակօրէն, մեր կտակի մասին գործակատար Ռուսուցչապետ Պարոն Գրիգոր Խալաթեանցի՝ որ իւրովանն յանձնառութեամբ և խնամով, և սեպհական հաստատութեամբ և մտերմութեամբ, ի գործ դրաւ գայն, որոյ համար միշտ երախտապարտ մնանք՝ իւր առ մեզ ունեցած բարեկամական ազնիւ սրտին։



digitised by A.R.A.R.@